ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1949 *Общественные науки*

Գ. Սահակյան

ԱՐԱՋԻ

Հակոբ Հակոբյանի և Մովսես Արաղու անունները անխզելիորեն կապված են հայ պրոլետարական ռևոլյուցիոն գրականության սկզբնավորման հետ։

Արաղին մոտ կես դար իր գրիչը ի սպաս է դրել հանուն աշխատավոր ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի ու հաղթանակի։ Դեռևս նախասովետական շրջանի իր գրական ստեղծագործություններում որոշակիորեն հետևելով գրական այն նոր ուղղությանը, որ ռուսական գրականության մեջ գծել էր ռևոլյուցիայի մեծ մրրկահավ Մաքսիմ Գորկին, Արաղին այնուհետև իր ամբողջ գրական հասարակական կյանքի ընթացքում մնացել է բոլշևիկների մեծ պարտիայի գաղափարներին հավատարիմ, պարտիական գրականության դարկ տվող մի գրող։

Արաղու նովելները, արձակ բանաստեղծությունները, վիպակները և վեպերը իրենց գաղափարական բովանդակությամբ և գեղարվեստական արժանիքներով առանձնահատուկ ու պատվավոր տեղ են բռնում սովետահայ արձակ գրականության մեջ։

* * *

Արաղին (Մովսես Հարությունյան) ծնվել է 1878 թվին, Շուլավեր գյուղում (այժմ՝ Վրաստանի ՍՍՌ, Շահումյան քաղաք)։ Նրա մանկությունն անցել է այդ հետամնաց, խուլ միջավայրում։ Այնտեղ էլ ստացել է իր առաջին տպավորությունները կալվածատիրական գյուղից, որոնք հետագայում հարուստ նյութ են տվել նրան՝ նախասովետական հայ հետամնաց գյուղը պատկերելիս։

Նախնական կրթությունը ծննդավայրի ծխական դպրոցում ստանալուց հետո Արաղին գալիս է Թիֆլիս՝ ընդունվում Ռեալական դպրոցը, որտեղ սովորում է ամբողջ յոթը տարի և ավարտում է 1898 թվականին։

Արաղու Թիֆլիսում անցկացրած տարիները նշանակալից են բանվորական շարժման աճման, սոցիալ-դեմոկրատական գաղափարների տարածման տեսակետից։

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց Անդրկովկասի քաղաքներում աճում էր բանվորական շարժումը, բանվորական շրջաններում խոր արձագանք էին գտնում մարքսիստական գաղափարները, որոնց տարածման գործում զգալի աշխատանք էին կատարում Ռուսաստանից այնտեղ աքսորված ռուս մարքսիստները։ Տարեց տարի ծավալվում էր մարքսիզմի պրոպագանդան Անդրկովկասում, Մեծ Ստալինի գլխավորությամբ կազմակերպվում էին առաջին մարքսիստական խմբակները։

Այդ թվերին էր, որ ընկեր Ստալինը ղեկավարում էր Թիֆլիսի Ուղղափառ Սեմինարիայի մարքսիստական խմբակը։

Ռևոլուցիոն տրամադրությունները թափանցում էին և աշակերտության մեջ։

Թիֆլիսի ռեալական դպրոցում գործել է աշակերտական մի խմբակ, որը ղեկավարել է Ստ. Շահումյանը։ Այդ խմբակը նպատակ է դրել աշակերտներին կապել հասարակական քաղաքական կյանքի հետ, նրանց համար հայթայթել քաղաքական գրականություն։

Արաղու այդ տարիների զեռևս անորոշ ձգտումները նախապատրաստական էտապ էին հետագա ռևոլուցիոն գործունեության համար։

Ավարտելով Ռեալական դպրոցը, նա 1899 թվին մեկնում է Պետերբուրգ և ընդունվում մայրաքաղաքի Տեխնոլոգիական ինստիտուտը։

Արաղու քաղաքական գործունեությունը շատ ավելի ակտիվ, բովանդակալից է դառնում նրա ուսանողական շրջանում։ Պետերբուրգյան այդ շրջանը նրան որոշակիորեն կապում է բանվորական շարժման հետ, թրծում ռևոլուցիոն պայքարի քուրայում։

1890-ական թվականների վերջերից ռևոլուցիոն շարժումը Ռուսաստանում ապրում էր իր վերելքը։ Այդ շարժմանը ակտիվ կերպով արձագանքում էր ուսանողությունը։ Օրից օր «Բանվորների ռևոլուցիոն պայքարի ազդեցության տակ ուժեղանում է նաև ուսանողական օպոզիցիոն շարժումը» (Համ Կ(բ)Պ պատմության համառոտ դասընթաց, էջ 39)։

Ցարական ռեակցիան մոլեգնում էր։ Բաժան հալածանքները, հետապնդումները ուժեղ էին ինչպես բանվորական, այնպես էլ ուսանողական շրջանում։ Ինստիտուտի դասախոսներին արգելված էր որևէ առաջադիմական գաղափար արտահայտել, պաշտոնական գիտությունից դուրս որևէ հարցի մասին խոսել։ Որոշ առաջադիմական պրոֆեսորներ եզոպոսյան լեզվով խոսում էին անցյալի դաժանությունների, հալածանքների, հետապնդումների մասին՝ ակնարկելով իրենց շրջապատող ներկա պայմանները։

Եթե համալսարանի պաշտոնական ամբիոնը չէր դոհացնում ուսանողների հարցասիրությանը, հաղուրդ չէր տալիս նրանց որոնող մտքին, ապա այդ անում էր անլեգալ գրականությունը, որ ուսանողները ձեռք էին բերում և կարդում մեծագույն հափշտակությամբ։

Ռևոլուցիոն գաղափարներով տարված ուսանողության ամենօրյա ընթերցանության նյութեր էին «Կոմունիստական Մանիֆեստը», Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» հոյակապ աշխատությունը, լենինյան «Իսկրայի» համարները, որոնք անլեգալ կերպով թափանցում էին Ռուսաստան և անցնում ձեռքից ձեռք։

Արաղին եղել է անլեգալ այդ գրականության կարդացողներից ու տարածողներից մեկը։ Նրա ռևոլուցիոն աշխարհայացքը ձևավորվել է հենց լենինյան գաղափարները պրոպագանդա անող այդ գրականության միջոցով։

1901 թվին Պետերբուրգի Կազանսկի մայր եկեղեցու հրապարակում կազմակերպվում է մեծ դեմոնստրացիա։ Ուսանողական այդ դեմոնստրացիային մասնակցում և ձերբակալվում է Արաղին։

Ցարական բանտային սարսափը ոչ միայն չի ջլատում նրա ռևոլուցիոն հաստատակամությունը, այլ և՛լ ավելի է կոփում նրան, ռևոլուցիան դառնում է նրա տարերքը։

1903 թվին Արաղին սորից է ձերբակալվում ու բանտարկվում, ապա աքսորվում է Անդրկովկաս։

Պետերբուրգյան տարիները հիմնականում ամրողջացնում, կազմակերպում են Արաղու աշխարհայացքը, որոշակիորեն նրան կանգնեցնում են ռևոլուցիայի ճանապարհի վրա, լուսավորում են նրան լենինյան դաղափարներով։

Արաղին Անդրկովկաս է վերադառնում անսահման մեծ հավատով դեպի ռևոլուցիայի վերջնական հաղթանակը։ Աքսորի պայմանական ժամանակը լրանալուց հետո նա նորից մեկնում է Պետերբուրգ, բայց արդեն անհնար է դառնում ուսումը շարունակել։ 1905 թվին վերջնականապես վերադառնում է Անդրկովկաս։

Վրա է հասնում 1905 թվականի ռուսական առաջին ռևոլուցիան, որը ցնցում է ողջ Ռուսաստանը։

Ռևոլուցիան սակայն ժամանակավորապես պարտվում է, ցարական կառավարությունը դաժան հաշվեհարդար է կատարում բանվորների և ռևոլուցիոն դաղափարներով տարված մտավորականության հետ։ Պայքարի դուրս եկած մարդկանցից ոմանք տեղի են տալիս, մանր բուրժուական մի շարք դրողների համակում է հուսալքումը, թախիծն ու վիշտը։

Հայ իրականության մեջ դրողներից Հակոբ Հակոբյանը միակն էր, որ կանգնած պատնեշի վրա, կոչ էր անում բանվորներին՝ անդավաճան շարունակել պայքարը։

Հուսալքման, թախծի այս օրերին է ահա, որ 1906 թվի վերջերին դրական ասպարեզ ոտք է դնում Մովսես Արաղին։

Այդ թվի սեպտեմբեր ամսին «Մուրճ» ամսագրում Ֆերնանդո ծածկանունով տպագրվում է նրա առաջին սատիրական պատմվածքը «Դոն Կարապետի արշավանքը դեպի Կղերստան» վերնագրով։

Ուշագրավ է, որ առանց հուսալքության ճահիճն ընկնելու, նացիոնալիստական դաղափարախոսությանը տուրք տալու, առանց տատանման, խարխափման, հենց իր առաջին գրվածքով Արաղին միանդամայն սահմանազատվում է ազգայնական պահպանողական դաղափարախոսությունից և հանդես է գալիս որպես դաշնակցական ավանտյուրիզմի, բուրժուական նացիոնալիզմի առաջին կրքոտ խարազանողներից, մերկացնողներից մեկը հայ իրականության մեջ։

Նա իր այդ սատիրական գրվածքում պատռում է դաշնակցության կեղծ դիմակը և ցույց է տալիս նրա հակաժողովրդական, ավանտյուրիստական ճիվաղային էությունը։

Ռեակցիայի տարիներին Արաղին աշխատում է բանվորական խմբակներում. շարունակում է գրել մանր, արձակ բանաստեղծություններ, որոնց տպագրումը անհնար է դառնում քաղաքական ծանր պայմաններում։

1911 թվից, նա, Մ. Արազյան ստորագրությամբ աշխատակցում է «Արոր» ամսագրին՝ դրելով մի քանի մանր պատմվածքներ («Ջահելն ու ահեյը», «Վերջին երազը», «Մենավոր լապտերը»)։ Սրանց մեջ ամենաու-

շաղրաֆն է «Վերջին երազը», որը լույս է տեսել 1912 թ. և կրում է բանվորական շարժման վերելքի որոշակի ազդեցությունը։ Փաստորեն այդ պատմվածքով էլ սկսվում է հայ պրոլետարական ռևոլյուցիոն արձակը։ «Վերջին երազը» նովելի նյութը վերցված է ռեակցիայի տարիներից։ Նախկին ուսանող Լևոնը նեռվել է բանտը և տառապում է թոքախտ հիվանդությամբ։ Նա բանտից ազատվում է, հայրենի գյուղն է վերադառնում ծայր աստիճանի քայքայված առողջությամբ ու ապրում է իր կյանքի ադոտ վերջալույսը։ Մահամերձ վիճակում Լևոնը երազում տեսնում է ռևոլյուցիայի համար մղվող պայքարը, իրեն էլ՝ բարիկադի վրա, շարժման ղեկավարների թվում։ Լևոնը մեռնում է՝ իրեն պատկերացնելով ռևոլյուցիայի համար հաղթողների շարքում։

Այդ դեղեցիկ ու խորապես դաղափարական սկիզբը դարձավ այն երկաթյա պատվանդանը, որի վրա խարսխվեց Մովսես Արազու ապագա դաղափարական ստեղծագործությունը։

Առաջին իմպերիալիստական պատերազմի նախօրյակին Արազին հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանի հետ միասին դարկ է տալիս պրոլետարական դրականությանը։ Նրանք հրատարակում են «Կարմիր մեխակներ» և «Իանվորի ալրոմ» ժողովածուները։ Արազին մասնակցում է այդ ժողովածուներին սեղմ, պարզ ու անպաճույճ լեզվով դրված արձակ բանաստեղծություններով։

Այս շրջանում է, որ նա դրում է նախառևոլյուցիոն շրջանի իր դրական գլուխ-գործոցը՝ «Արևը» արձակ բանաստեղծությունը, «Կիսատ տունը», ապա՝ «Կարմիր համբույրը», «Արյունոտ ծաղիկները», «Վերջին տերևը» և այլն։

Արազին մեծ խանդավառությամբ է դիմավորում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի հաղթանակը։ Նրա մեջ տեսնում է մարդկության փրկությունը, աշխատավոր ժողովրդին կաշկանդող շղթաների խորտակումը, տեսնում է հարյուր հազարավոր բանվորների իդեալների կատարումը և լցվում է նոր թափով ու խանդավառությամբ։

Անդրկովկասում դեռ իշխանությունը դանվում էր կոնտր-ռևոլյուցիոն դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների ձեռքին։

Որ ամբողջ գիտակցական կյանքը բանվոր դասակարդի պայքարին տրամադրած դրողը նորից նետվում է ռևոլյուցիայի հորձանուտի մեջ, մասնակցում է բանվորական ցույցերին, ժողովներին։

Մենշևիկյան կառավարությունը 1920 թվին նրան ձերբակալում է ու բանտարկում։

Արազին Սովետական իշխանության հաստատումը Վրաստանում դիմավորում է բանտում, որտեղից նրան ազատում են սովետական կարդերը։ Այս երջանկագույն օրը Արազին նկարագրել է իր «Սովետական առավոտը» ակնարկում։

Երկար տարիների ընթացքում փայփայած դաղափարների կենսագործումը տեսնելով սովետական պայմաններում, Արազին ամբողջովին նվիրվում է սովետական դրականությանը, միմյանց հետևից լույս են տեսնում նրա ռեալիստական, դունագեղ պատմվածքները։

1922—24 թվերին նա աշխատակցում է Թբիլիսիի «Դարբնոց» պար-

բերականին, «Մարտակոչ» օրաթերթին և Երևանի «Խորհրդային Հայաստան» օրաթերթին։

«Մարտակոչ»-ում լույս են տեսնում նրա մի շարք նովելները, այդ թվում «Արևելյան մոտիվներից», «Խալիչայի երգը» և «Արծաթի տակ» արձակ բանաստեղծությունները։

1923 թվին լույս է տեսնում նրա պատմվածքների առաջին ժողովածուն, որը պարունակում էր «Կիսատ տունը», «Արևը», «Վիրավոր թռչունը», «Արյունոտ ծաղիկները», «Կարմիր համբույրը», «Անցյալի նիրհը», «Կարմիր հերոսուհին», «Ուղարկում եմ քեզ այս գլուխը», «Վերջին բարիկադը», «Անմահը»։

Այնուհետև գրեթե ամեն տարի լույս են տեսնում նրա նոր ժողովածուները։

1933 թվին Արաղին լույս է ընծայում իր «Լուսնի շողերով» և «Ջրվեժի ցոլքում» վիպակները։

1940 թ. լույս տեսած «Այրվող հորիզոնը» վեպը, որը մասամբ ունի կենսագրական բնույթ, պատկերում է ռևոլյուցիոն շարժումները 900-ական թվականներին Պետերբուրգում, Կազանսկի հրապարակում տեղի ունեցած ուսանողական ցույցը, այդ ցույցին հեղինակի մասնակցությունը, բանտը և աքսորը։

Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում Արաղին սովետական հայրենասեր գրողի իր կոչման բարձրության վրա կանգնած միմյանց հետևից գրում է մի շարք պատմվածքներ («Հայրենի հողը», «Աշխենը», «Պրոֆեսորը», «Խնճույքը», «Վերդինեն», «Ալեքը» և այլն), որոնցից մի մասը ամփոփվում է 1944 թվականին լույս տեսած «Անհաղթները» ժողովածուի մեջ։

* * *

Արաղու նախասովետական շրջանի ստեղծագործությունները քանակով մեծ չեն։ Այդ շրջանի նովելների թիվը հազիվ մեկ տասնյակի կարող է հասնել, սակայն դրանք կազմում են հայ պրոլետարական արձակ գրականության առաջին ծաղկեփունջը և իրենց գեղարվեստական արժանիքներով ու գաղափարական բովանդակությամբ արժանի են առանձնահատուկ ուշադրության։

Այդ նովելները, որոնք կարող են համարվել նաև արձակ բանաստեղծություններ, գրված են մեծ հուզականությամբ, խորը լիրիզմով, պարզ ու անպաճույճ լեզվով։ Դրանք անմիջական են, անկեղծ, տպավորող և գեղագանցապես տոգորված են ռևոլյուցիոն ռոմանտիզմով։

Խորապես գաղափարական և ռևոլյուցիոն բովանդակություն Արաղին հաճախ տվել է այլաբանական պատկերներով, որ ակներևաբար գալիս է Մաքսիմ Գորկուց և առանձնահատուկ ուժ է հաղորդում նովելին, դարձնում է այն ավելի ազդեցիկ ու դիպուկ։

Արաղու գրական հերոսները վերացական, մտացածին տիպեր չեն, շատ ռեալ են, կենդանի և գործում են իրենց միջավայրում։ Նրանք խտացնում են հայ աշխատավոր ժողովրդի ամենատգնիվ գծերը, սովորությունները, ունեն հարուստ հոգեկան աշխարհ։ Այդ անգրագետ կամ կիսագրագետ գյուղացիները, որոնք երբեք քաղաքի երես չեն տեսել ու բուր-

ժուական այսպես կոչված քաղաքակրթության մասին դաղափար են կազմել միայն իրենց կրած տառապանքից, ճանաչում են մարդը, կյանքը իր ամբողջության մեջ և դատողություններ են անում, փիլիսոփայում կյանքի մասին, իսկ այդ բոլորի եդրակացությունը, ամփոփումը հանգում է կապիտալիստական կարգերի ժխտմանը։

Արագու հերոսները հասարակական կյանքի նկատմամբ անտարբեր չեն, ակտիվորեն միջամտում են այդ կյանքին, հետաքրքրվում են, պայքարում, նրանք իրենց դժբախտությունը չեն բացատրում ճակատագրի կամ աստծո քմահաճ տնօրինությամբ, այլ դրա պատճառը տեսնում են սոցիալական անհավասարության մեջ։

Կապիտալիստական հասարակարգը դժոխային պայմաններ է ստեղծել աշխատավորների համար, հատկապես արդյունաբերական բանվորների համար, որոնք օրվա հացի կարոտ իրենց կյանքը քարշ են տալիս մեծ քաղաքի անարև և խոնավ նկուղներում։

Աշխատավորական այդպիսի ընտանիքի կործանումն է պատկերված Արագու «Արևը» արձակ բանաստեղծության մեջ (1913)։ Այդտեղ տրված է իր երեք դավակներին զրկանքի ու թշվառության դոհ տված աշխատավոր մարդու ամենարուռն ցասումը և կիզող ատելությունը «վերևի հարկում» ապրող հարուստների նկատմամբ, որոնք խլել են բանվորական ընտանիքներից ոչ միայն տնտեսական միջոցները, այլև բնության պարգևները, արևի լույսը։

Նովելի վերջավորության՝ «Դնա, հայտնիր աշխարհին, ասա վերևի հարկը արևի շողքերը խլեց, ստվեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց էն ոսկեհեր աղջկան» տողերը, մի ուժգին բողոք է, մարտակոչ՝ ուղղված բանվորի արյան գնով հղփացած հարուստ դասակարգի դեմ։

Կապիտալիստական շահագործման ենթակա «ենեղլիկ փողոցի» այդ մարդիկ՝ Արագու տառապած հերոսները խորապես գիտակցում են, որ կապիտալիստական հասարակարգում աշխատավոր ժողովուրդը ավելի սոսրադասված է, քան նույնիսկ կենդանիները։ Պարտեզի ծաղիկները ավելի մեծ հոգատարության ու գուրգուրանքի ենթակա են, քան ապրուստի միջոցներից զուրկ աշխատավորները («Արյունոտ ծաղիկներ»)։ Դրա համար էլ այդ հերոսները տոգորված են հարստահարողների դեմ անհողդողդ պայքար մղելու վճռականությամբ։

Հեռագրատան երկրորդական պաշտոնյա Մելանյանը («Վանդակներում») գիտակցում է, որ իր քարշ տված ծանր կյանքը, իր կնոջ ու երեխաների դալուկ դեմքը, հյուծումը, այն բանի համար են, որ «հարուստ ու անհոգ երջանիկ զույգի համար» հաճելի կյանք ապահովվի և որ ցնորք է այդ հասարակարգում լավ ապրելու մասին մտածելը, այդ կաշկանդող կապանքներից, վանդակներից դուրս գալը, որ փրկություն միայն շահագործող դասակարգերի դեմ մասսաներին համախմբելու, պայքարի դուրս բերելու մեջ է։

Այս գիտակցությունն է, որ Մելանյանին գրեթե էքստազի մեջ ձգած բղավել է տալիս.

— Ես ձեզ հետ եմ... գնանք բոլորս միասին։

Եվ նոր տարվա շնորհավորական բառեր պարունակող հեռագրերը հա-

ղորգելիս, Նա սարվում է այդ պայքարի գաղափարներով ու պատկերացնում է աշխարհի վերափոխումը՝ իր և իր նման մարդկանց միջոցով։

«Նա չխչխկացնում էր՝ շնորհավոր, շնորհավո՜ր ու թվում էր՝ մի ուրիշ տոն է երկրի վրա, թե հսկա դանկեր են ղողանջում օվկիանոսից օվկիանոս՝ ամբողջ աշխարհին ու ինքը կանգնած բարձր՝ մի աշտարակի վրա, գոչում է բյուրավոր ամբոխին.— Ուղղեցեք կորացած մեջքերը, ծաղկեցրեք թառամած կանաչները.... չկան այլևս վանդակները, դուք ազատ եք, ազատ»։

«Կիսատ տունը» պատմվածքը այլաբանորեն պատկերում է անավարտ մնացած 1905 թվի ռևոլուցիան։

Այդ նովելի հերոսը՝ Սարգիսը ազքատ գյուղական աշխատող է, հողազուրկ է և տնազուրկ։ 1905 թվի ռևոլուցիայի օրերին նա փորձում է վերստանալ իր մարդկային իրավունքները։ Այն օրերին, «երբ մութ-մութ խորշերից ձայնեց գարավոր բողոքը», երբ հնչեց պատմության ահեղ ձայնը, թե էլ հարուստ ազքատ չկա», այդ օրերին նա սկսում է կառուցել իր տունը, բարձրացնում է նրա պատերը։ Սակայն ռևոլուցիան ժամանակավորապես պարտվում է, տունը կիսատ մնում, գյուղի հրապարակում գարձյալ իրենց դիրքերն են գրավում վաշխառուները, «հաստափոր Սանդրոն և նիհար ու չոր Մարտիրոսը»։

Ժամանակավորապես հաղթում է ինքնակալությունը։ Արազին սակայն լի հավատք ունի ապագայի նկատմամբ։ 1913 թվին գրված այդ պատմվածքի մեջ շատ որոշակիորեն ակնարկում է գալիք նոր ռևոլուցիայի մասին։ Նրա հերոսը այն գիտակցության է եկել, որ միևնույն է, այդպես չի մնա, նա կուլակին ասում է.

«Մի առվով որ ջուր է գնացել, մին էլ կգնա... սաղ աշխարհի տունն ա կիսատ մնացել, մենակ իմը հո չի։ Լավ իմանաս, էն օրերն էլի կգան, տունս կշինեմ, քու աչքն էլ կհանեմ...»։

Գալիք այդ նոր ռևոլուցիայի անխուսափելիությունն է կազմում «Հերթիաթը» պատմվածքի գաղափարական բովանդակությունը։

Կալվածատիրոջ հարստահարության ու կեղեքումների դժբախտ զոհ Մարգարին — որի տունն ու տեղը հին կարգերը վերածել են ավերակուտի,— փրկելու է հնքիաթի չորրորդ եղբայրը։

Այդ չորրորդ եղբայրը, որը «սլանում է ամպերից վեր իր կարմիր նժույգով, և գալիս է ազատելու Մարգարին իր խավար բանտից», այլաբանորեն ներկայացված սոցիալիստական ռևոլուցիան է, կապիտալիստական շղթաներից աշխատավոր մարդկությանը ազատող ռևոլուցիան։

Հաղթանակի նկատմամբ այդ անսահման հավատն է, որ Արազու այս շրջանի պատմվածքների հերոսներին դարձրել է համարձակ, պայքարող։

Արիություն, կորով, կամք ու վճռականություն կա նրանց մոտ։ Բախտից հալածված այս մարդիկ հուսաբեկ չեն ողրում իրենց դառը վիճակը, իրենց ռանտիմենտալ լաց ու կոծով, թախիծով ու վշտով չեն համակում շրջապատը, համբերություն ու հնազանդություն չեն քարոզում։ Նրանք բմբոստ են, մաքառող։ Այդպան Ակոփը («Խորհրդավոր այգին»), որ տարիներ շարունակ տեսել է, թե ինչպես հարուստ այգետերերը շահագործում են իր նմաններին, ճնշում նրանց, անպատվում են նրանց ընտանեկան պատիվը, պայքարի ճանապարհը շատ որոշակի է տեսնում։ Նա քաջ հավա-

տացած լինելով, որ «էս աշխարհում մի ծուռ բան կա, մինչև չուղղվի, հանգստություն չի լինի», այդ ծուռ բանը ուղղելու միջոցը համարում է ակտիվ գինված պայքարը։ «Մորհրդավոր այգին» պատմվածքի մեջ հիշատակված մարդիկ իրենց իրավունքն ու պատիվը պաշտպանում են կրակոցներով։

Նույնիսկ «Կովախնձորը» պատմվածքի փոքրիկ հերոսը, որը կիզող ատելությամբ է լցված իր նման աղքատ երեխաներին արհամարհող, ծաղրող հարուստ երեխաների նկատմամբ, իր թշնամի երեխաներին պատասխանում է որոշակի մարտահրավերով, քարկոծումով, որը շարունակվում է մինչև հաղթական վախճանը, մինչև կարմիր խնձորի ցած ընկնելը։

«Փարերը թռչում էին բարձր, բարձր ու նորից ընկնում, բայց ես համառությամբ շարունակում էի նետել։ Երտինքը պատել էր ճակատս, սիրտս ուժգին բաբախում էր, բայց ով կարող էր ինձ ետ դարձնել կռվից»։

Արազու այս շրջանի ստեղծագործությունների մեջ ուշագրավ է նրա «Կարմիր համբույրը», որը գրված է 1915 թվին, առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ։

Պատմվածքի մեջ նկարագրված են պատերազմի ահավոր ու ցնցող հետևանքները, հաղարավոր ընտանիքների կործանումը։ Այդ ամբողջ արհավիրքը նկարագրելով հանդերձ, Արազին հանդես չի գալիս որպես պատերազմը դատապարտող ու պատերազմի երկյուղով մարդկանց սարսափեցնող մի գրող, այլ կոչ է անում դատակարգային կռվի։ Նրա հերոսը կարմիր համբույր տալով իր վիրավոր ընկերոջը, կոչ է անում համախմբվելու և պայքարելու. «Կռվենք և մեր ընկերական շղթան, — ասում է նա,— եկ միացնենք ամուր և ամուր»։

«Մենք կսպասենք գիշերվան ու կելնենք, կգարթեցնենք գիակներին անթիվ ու կքայլենք դեպի քաղաքները քարահատակ։ Ցուր ու բորանի հետ մենք կխուժենք ամենուրեք, շտինդ ու շրխկոցով կրանանք փակ դռներն ու ներս կտանենք ցրտահար, արյունոտ մեր ճշմարտությունը։ Մենք ահեղաղղորդ վիզեր կհնչեցնենք, դժոխային սարսուռ կտանք մեր դահիճներին ու հրեղեն պատգամներ կնետենք աշխարհից աշխարհ։ Ու կգա այն օրը... հաղթական կամարների տակով մենք կանցնենք նոր կյանքի շարքերով։

Ընդունիր համբույրս ընկեր, արյունոտ, կարմիր համբույրը»։

* * *

Արազու սովետական շրջանի ստեղծագործությունները բազմազան են թե ժանրային առումով և թե իրենց թեմատիկայով։ Սովետացման առաջին տարիներին Արազին պահելով իր հիմնական ժանրը՝ կարճ նովելի ու աշխակ բանաստեղծության, որոնք շատ հաճախ ձուլվում են ու հանդես են գալիս միասնաբար, ստեղծանաբար անցնում է վիպակի, նույնիսկ ծավալուն վեպի։

Արազու բազմաժանր այդ ստեղծագործությունը արտացոլում է նոր՝ սովետական հասարակարգի բազմազան երևույթները։

Արազին ընթացել է մեր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի հարցերին համընթաց։ Բոլշևիկների պարտիայի լոզունգներին, առաջադրած

պահանջներին հավատարիմ՝ արձագանքել է յուրաքանչյուր շրջանի համար բնորոշ խնդիրներին։

Սովետացման առաջին շրջանի համար բնորոշ են Արագու «Արևելյան մոտիվներ» շարքը։ Այդ նովելների մեջ երևում է կապիտալիստական շահագործումից ու կեղեքումից ազատված սովետական գրողի ջերմ վերաբերմունքը դեռևս կապիտալիզմի ճիրաններում գալարվող աշխատավոր մարդու նկատմամբ։ Դրանց մեջ սովետական ազատագրված քաղաքացին ձեռք է մեկնում բուրժուական շահագործման ենթակա աղքատին ու չքավորին, կոչ է անում նրան անցնել այս ափը։

«Խալիչայի երգը» պատմվածքում, գունագեղ պատկերներով պատկերված են կապիտալիստական գործարանային դժոխքում խամրած, իր ֆիզիկական ու հոգեկան արիությունը կորցրած մարդու տառապանքը։

Որ և իր անչափահաս երեխայի առողջությունը կապիտալին զոհաբերած, գործարանից դուրս շպրտված Մահմեդի՝ հաշմանդամ որդուն շալակած մուրացկանության ճանապարհը բռնելը, այն անխուսափելի ճակատագիրն է, որին դատապարտված է կապիտալիստական հասարակարգում ամեն մի աշխատավոր։

Մահմեդի դասակարգի մարդկանց կյանքը ամբողջացնում է բեռնակիր Հասանի տրագեդիան («Արծաթի տակ»)։

Հաղթանդամ, հուժկու բեռնակիր Հասանը թոքերի բորբոքումից հիվանդ, դեռևս չառողջացած, իր երեխաներին մի կտոր հաց ճարելու ծանր հարկադրանքի տակ շալակում է պարսիկ վաճառականի արծաթը պարունակող պարկը և ծանր, դժվարին քայլերով ուղղվում դեպի անգլիական բանկը։ Պտտվում են նրա ոտները, կայծկլտում աչքերը, խվում է քիչ աշխարհը դառնում է նրա շուրջը, բայց նա էլի քայլում է, որովհետև սոված երեխաները բազկատարած սպասում են հացի։ Քայլում է Հասանը, բայց պարտվում է, հիվանդությունը հաղթում է նրան, ջլատում նրա վերջին ուժերը ու անգլիական բանկի աստիճանների վրա՝ անշնչացած գլորվում է գետին, հատակին սփռում սպիտակ արծաթը։ Հասանի բերանից դուրս շատրվանող արյունը, նրա հիվանդ թոքերի այդ վերջին հևքը, ուժգին բողոք է ընդդեմ կապիտալիստական անարդ կարգերի։

Անհամեմատ ավելի ուշագրավ են Արագու վերականգնման շրջանի ստեղծագործությունները՝ «Ընկեր Մուկուչը», «Հանեսը», «Հազար գլխանի» և այլն։

Այս պատմվածքների մեջ Արագին սոցիալիստական ռեալիզմի մեթոդով փորձել է պատկերել նախահեղափոխությունից շրջանում տառապած, չարչարված, հալածված, հոգեպես ընկճված իրավազուրկ մարդու աստիճանական վերափոխումը նոր հասարակարգում, որտեղ նա դառնում է տիրապետող ուժ։

«Ընկեր Մուկուչը» համարձակ կարելի է համարել սովետահայ գրականության ամենահաջողված գործերից մեկը։ Որանով պետք է բացատրել, որ այդ պատմվածքը արժանացել է անմահ Մաքսիմ Գորկու գնահատմանը։

Երկար տարիներ տառապած, շահագործված կապիտալիստական գործարանում պահակություն անելով, իր երեխաների համար մի կտոր չոր հաց անգամ վաստակել չկարողացող Մուկուչի, որի կոշիկների վրա տա-

րիները միմյանց վրա դիզել են կարկատաններն ու ծանրացրել. նոր կարգերում աստիճանաբար վերափոխումը, գործարանային կոլեկտիվի մեջ վերածնումը, այդ կոլեկտիվի իրավահավասար անդամ դառնալը և վերջապես «Ընկեր Մուկուչ» դառնալը, հեղինակը տվել է ռեալիստական վառ գույներով, համոզիչ փաստարկումներով։ Տիպական են հատկապես Մուկուչի դատողությունները սովետացման առաջին օրերին։ Մուկուչի մոտ սովետացման առաջին ամիսներին նոր կարգերի դաղափարը անխզելիորեն կապված է միայն տնտեսական պրոբլեմի լուծման, «հացի փայերի ավելացման» հետ։ Հետագայում արդեն նա ըմբռնում է նոր հասարակարգը շատ ավելի լայն իրավական սոցիալական սահմաններում։ Նա գիտակցում է, որ հասարակական նոր կարգերը ոչ միայն բերելու են իրենց հետ ապրուստի ավելի լայն միջոցներ, այլ, որ այդ կարգերում իր և իր նման տառապած մարդիկ բարձրանալու են կյանքի հատակից ու դրա փոխարեն իջնելու են շահագործողները ու այս ամբողջ նոր երևույթը նա փորձում է տեսնել ընկեր բառի մեջ։ Նա գիտակցում է, որ նոր հասարակարգի կերտողներից, ստեղծողներից մեկը լինելու են ինքը և իր նման բանվորները, ուզում է, որ զործարանում իրեն ընկեր ասեն։

«Ոհարկի, Մուկուչը դանդատ չունի, գործարանում ամենքը հետը սերով են վարվում, բայց թե որ կարդ է, պատիվ է, թող իրեն էլ «հրնդեր» ասեն, թե չէ, Մուկուչի սիրտը շատ է պակասում»։

Այդ դեռևս այն շրջանումն է, որ դասակարգային թշնամին աշխուժ է, դեռ գլուխը բարձր է պահում ու զործարաններում, սովետական դյուղում կատարում է իր քայքայիչ աշխատանքը, դրպարտում ամենաադնիվ աշխատողներին, դրպարտում Մուկուչներին։

Ճիշտ այն պահին, երբ Մուկուչը սպասում է «հրնդեր» դառնալու, հավասարվելու բոլորի հետ, դրպարտվում է որպես զող։ Սպառնում են նրան դատի տալու։ Մուկուչը կորցնում է իրեն։

«Էհ, մտածում է Մուկուչը, բանս վերջացած է, կտանեն, բա ինչ պիտի անեն... մթամ, ով է իմ տերը... իմ գլուխը ջհաննամը, ինչ պիտի անեն երեխերս»։

Ընկերական դատի ժամանակ Մուկուչի աչքին ընկնում է Լենինի նկարը՝ կպցրած պատին։

«Ասում են լավ մարդ է,- մտածում է նա,—աթ, թե էստեղ լիներ, ինձ կօգներ, ես էլ էս օրը չէի ընկնի»։

Նա դեռ չի գիտակցում, որ բացակա է Լենինը, բայց ներկա է լենինյան օրենքը, որը իր և իր նմանների համար է ստեղծված, և ահա այն պահին, երբ նա ապասում է, որ կդատապարտեն իրեն, խոսում է գործարանի բանվոր Սահակը, խոսում է բարձր, զայրացած, ցասումնալից, մի պահ Մուկուչին թվում է թե իր վրա է բարկացել, միայն զարմանալին այն է, որ «հրեն, հրնդեր Մուկուչ ասաց, թե չարացած է Մուկուչի վրա, բա ինչի է պատիվ անում, «հրնգեր» ասում»։

Բանվոր Սահակի ճառի վրա կառավարիչը վեր վեր է թռչում, մինչև ականջները կարմրում է, իսկ Մուկուչի կողքին նստած բանվոր Սերգոն ասում է նրա ականջին.

«Հը, տեսար Մուկուչ, ոնց հուշտ արինք քու կառավարիչին, մեղ բանվոր կասեն, հա»։

Ու այսպես, բանվորական կոլեկտիվը բարձր է պահում Մուկուչի պատիվը, աղատում է նրան դրպարտության ցանցից, դտնում իսկական դողին։ Բանվորները Մուկուչին առնելով իրենց շարքերը, վերափոխում են նրան հոգեպես, մտավորապես, սոցիալապես, պատմվածքի վերջում ընթերցողը արդեն Մուկուչին տեսնում է բոլորովին կերպարանափոխված, ավելի երիտասարդացած, գործարանի արտադրական ժողովում, երբ նախագահը ասում է.

Խոսքը պատկանում է ընկեր Մուկուչին...

Մուկուչից շատ բանով տարբեր չէ Հանեսը։ Նա գյուղական աշխատավոր է, անցյալում ենթարկվել է կալվածատեր կուլակների շահագործմանը, ամբողջ հարստությունը խլել են նրա ձեռքից, դարձել է հողազուրկ մի բատրակ։ Սովետական իշխանությունը հանեսներին ցույց է տվել նոր կյանքի ուղին, բռնել է նրանց, ձեռքից բարձրացրել վեր, կանգնեցրել իրենց դիրքի վրա։

Սովետական գյուղում էլ, սակայն, դեռ ուժեղ է կուլակությունը. Սովետական իշխանության պետական դեկրետներով սահմանված օրենքները խախտվում են, գյուղի կուլակների և այդ կուլակներից խուսափող գյուղական ծառայողների հակասովետական գործունեության հետևանքով։

Հանցյալում «աչքը վախեցած» Հանեսը նկատում է, որ՝ ինչքան էլ կուլակ Սիմոնի հողամասից մի կտոր տրված է իրեն, բայց նա հնարավորություն չունի այն մշակելու։ Կուլակ Սիմոնն իր ածգանակ որդիներով կանգնած է իր ղլխին, չի թողնում որ ինքը վար անի։

Հանեսի ներքին պայքարը առաջանում է այն բանից, որ նա իր առջև տեսնում է թշնամի կուլակին իր որդիներով, բայց չի տեսնում, որ թիկունքում կանգնած է Սովետական իշխանությունը, նրան թվում է թե ինքն էլի պարտվելու է և, որ, շատ բան չի փոխվել գյուղում, դրա համար էլ նա միշտ ամեն մի քաղաքից եկողին մոտենալով, խնդրում է օգնել իրեն և պատմում է, թե.

«Էս բոլշևիկի կառավարությունը որ էկավ. Սիմոնի արտը խլեց ու տվեց իրան, Հանեսին ու հիմի նա չի կարողանում տերություն անել արտին, օգտվելով նրանից, Սիմոնը կռիվ է գցում, չի թողնում մոտ գնալ. իսկ էդ Սիմոնը ամենանարուստ մարդն է գյուղում։

—Խնդրում եմ մի էնպես հրաման տաս, —ասում է նա նորեկներին,—որ Սիմոնը վերջ տա. էլ կռիվ չգցի ու արտն էլ ինձ վրա պինդ հաստատվի»։

«Աչքը վախեցած» Հանեսը, սակայն, ըմբռնում է, որ իր և կուլակ Սիմոնի միջև կատարվածը այլևս տիպական չէ Սովետական կարգերում, և որ Սովետական իշխանությունը իր նման չքավորների շահերի պաշտպանն է, և ինքը պարտավոր է պայքարել այդ Սովետական իշխանության հեղինակության բարձրացման համար։ Այդ գիտակցությունը, սերը դեպի նոր կարգերը նրան ուժ և եռանդ են ներշնչում և մղում են ճակատագրական մի քայլի՝ կուլակի սպանությանը։

Ուշագրավ է, որ Հանեսը այդ քայլը կատարում է ոչ միայն այն բանի համար, որ պաշտպանի իր աշխատանքի արդյունքը, այլ այն պատճառով, որ Սիմոնը ցանկանում է հարձակվել և պատռել գյուղսովետի քարտուղարի տված գրությունը Հանեսին։

Արադին լիովին պատճառաբանել է Հանեսի այս արարքը։ Այդ մի անհատ Հանեսի և Սիմոնի պայքարը չէր, այլ երկու տարբեր դասակարգերի պայքարը՝ բատրակների, նախկին չքավորների պայքարը, նույնիսկ սովետական կարգերում իրենց վրա հսխորտացող, նորից բարձրանալ ցանկացող. նոր կարգերի կատաղի թշնամի կուլակության դեմ։

Հանեսը սպանությունից հետո ոչ միայն չի զղջում, այլ, ինչպես հեղինակն է վկայում, արամադրված է իրեն հարցնողներին պատասխանելու.

«Ես եմ սպանել և եթե վեր կենա, նորից կսպանեմ»։

Արադու Բենոյին էլ («Հազար գլխանի») ուժ ու համարձակություն տվողը Սովետական իշխանությունն է, իր թիկունքում կանգնած հազարավոր աշխատավորները, որոնց աջակցությամբ և օժանդակությամբ նրան հաջողվում է մերկացնել, դուրս շպրտել իրենց շարքերից կոլխոզային տնտեսության մեջ սողոսկած, այդ տնտեսությունը ներսից քայքայելու ձգտող դասակարգային թշնամուն։

Կուլակության դեմ մղվող պայքարը իր արտացոլումն է գտել Արադու մի շարք ուրիշ պատմվածքներում։ Դրանցից են՝ «Մոլախոտը», «Անխուսափելին», «Փուչ Արելը», «Դավադրությունը», «Գայլերի ճամբին», «Նեղ փողոցի սիմֆոնիան» և այլն։ Սրանցից յուրաքանչյուրի մեջ տարբեր ձևերով տրված է նույն մանվան դատապարտված դասակարգի և նոր վեր ելնող դասակարգի գոտեմարտը։ «Անխուսափելին» նովելում հնի և նորի այդ պայքարը դրսևորված է Մեժլումյանի և Մաղաքյանի ճակատագրական բախման մեջ։ Այստեղ էլ, ինչպես «Ընկեր Մուկուչը» պատմվածքում, սովետական ծառայողների կոլեկտիվը իր պաշտպանության տակ է առնում համեստ աշխատող հաշվապահ Մաղաքյանին ու մեկ մարդու նման ծառանում է սովետական հիմնարկում ճեղքվածք առաջացնելու ձգտող Մեժլումյանի դեմ։

«Դավադրությունը» նովելում այդ բախումը տրված է շատ ավելի դիպուկ և պատճառաբանված։ Այնտեղ կոլխոզը քայքայելու ձգտող, կոլխոզային աշխատանքը լքելու որոշում տվող գյուղացիների դեմ դուրս է գալիս ոչ միայն գյուղի աշխատավոր գիտակից մասը, այլև նոր սերունդը՝ հանձին կոմերիտմիության և պիոներիայի. ու այդ նոր սերունդի հանդես գալը կոլխոզային աշխատանքին մասնակցելու ցանկությունը, հարկադրում է դասակարգային թշնամու ձեռքին գործիք դարձած տատանվող գյուղացիներին՝ տեսնել իրենց իսկական ճանապարհը, համոզվել, որ ապագան այդ սերունդի գնացած ուղու մեջ է, ու՝ հետևել նրան։

Հնի և նորի պայքարը ուշագրավ ձևով է արտահայտված Արադու «Բաբելոնի աշտարակը» կարճ նովելում։ Ս՛իջակ տնտեսության տեր Մուքելը անգրագետ է, բայց իրենց գյուղի տիրացուին կարդալ տալով, ծանոթ է կրոնական գրքերի մի քանի առասպելներին ու պատմություններին, այդ թվում Բաբելոնի աշտարակաշինության պատմությանը։ Նա Սովետական իշխանության ոչ թշնամի է, ոչ էլ բարեկամ, թշնամի չէ, որովհետև այդ իշխանության օրենքներում չի տեսնում իրեն վնասող որևէ բան, բարեկամ էլ չէ, որովհետև սովետական իշխանությունը մերկացնում է կրոնը, որպես ժողովրդին վնասող մի թույն, իսկ ինքը հավատացյալ է։ Բայց ահա նա լսում է հակակրոնական պատախոսություններ, տեսնում է հիդրոկա-

յանի կառուցման ժրաջան աշխատանքը։ Ու ինչքան էլ որ այդ հիդրոկայանի աշխատանքը նրան թվում է աշտարակաշինություն, թե անխուսափելիորեն ապարդյուն է անցնելու, դրան մասնակցող մարդիկ պատժվելու են աստծո կողմից, ինչքան էլ որ համոզված է, թե երբեք ջրից լիս դուրս չի դա», այնուամենայնիվ շրջապատի համատարած խանդավառություններ, ոգևորություններ, քաղաքից եկած իր բանվոր որդու շատ որոշակի ու հահամոզիչ խոսքերը, նրան գցում են երկընտրանքի մեջ։ Նա տատանվում է, մտածում։ Իսկ երբ կատարվում է իր համար անսպասելի հրաշքը, դյուզը ստանում է էլեկտրական լուսավորություն, հանդիսավոր բացման օրին նա իր տարիների ընթացքում երկյուղածությամբ պաշտպանած կրոնական դիրքը տանում ու գնում է էլեկտրական լուսավորության սյան տակը։ Այդ հնի անձնատվությունն է նորին, այդ նորի հաղթանակն է դյուզացի Մուքելի մոտ։

Արագու հերոսներից մի քանիսն էլ, երբեք չհամակերպվելով հանդերձ նոր կարգերին, այդ կարգերում տեսնելով իրենց դասակարգի ոչնչացումը, անուժ են զգում իրենց զիմագրելու, զժգոհություններ թաքցրած սրտերում, տեղի են տալիս, հալչում են, չքանում ասպարեզից։

Այդպիսի պատմվածքներից է «Հին ժամացույցը»։ «Երկու քաղաքների շրջանով անցած» հին հարուստի տան կահ կարասիքի հետ սև շուկա դուրս եկած այդ ժամացույցը իր միալար չիկչիկոցով, այլաբանորեն ս զգաբարում է հին հասարակակարգի կործանումը ու կրկնում է.

— Մեռնում եմ, մեռնում եմ։

Իր հին ժամացույցը դուրս բերող պառավը և հին գրքերը փողոցում սփռելով ծախող ծեր գեներալը («Անցյալի նիրհը») երկուսն էլ նույն մեռնող հասարակակարգի վերջին ներկայացուցիչներն են։ Սրանք նորի հետ ամենևին չհամակերպվելով հանդերձ, հոխորտացող, ըմբոստացող չեն, կըտրել են իրենց հույսը հնի վերականգնացման մասին, և հենց այդ էլ ջլատել է նրանց, ընկճել։ Նրանք դարձել են մի տեսակ ապրող մեռելներ։ Այդպես է հենց ծեր գեներալը, որի կյանքի ամբողջ իմաստը փողոցում իր հին գրքերի մոտ նստած նիրհելն է, հավիտենական նիրհը։

Սրանցից շատ բանով չի տարբերվում նախկին հարուստ Աղասյանը («Անցվորը»), որը նոր կարգերում կորցրել է իր ոտքի տակի հողը ու իր նախկին ապարանքների մոտով անցնում է գրեթե անտարբերությամբ, կարծես չի նկատում, միայն ասում է ինքն իրեն՝ անցիր, անցիր։

Մի քիչ տարբեր է Թավաբրեկյանը («Ցեսիլ»)։ Նա հին չինովնիկ է, գեռևս նախասովետական տարիներում դարձել է պաշտոնաթող։ Հին կարգերում նա տանը պահում է իրեն որպես արքայական չինովնիկ, սիրում է հոխորտալ, հրամայել, կարուկ կարգադրություններ անել, ամեն բոպե կնոջը հիշեցնելով, որ ինքը «նորին կայսերական մեծության չինովնիկն» է եղել։

Իսկ երբ գալիս է ռևոլուցիան, հաստատվում են Սովետական կարգեր. Թավաբրեկյանը կորցնում է իրեն, ընկնում ծայր աստիճան հուսահատության մեջ, սարսափից փողոց դուրս չի գալիս, տանն էլ իր իշխանությունը, լիազորությունները հանձնում է կնոջը։

Թավաբրեկյանը նույնպես այդ կործանվող հասարակակարգի վերջին մոհիկաններից է, զժգոհ, բայց անուժ։ Սակայն նա, հոխորդ պատմվածք-

ների հերոսների սման, հեշտ կերպով համակերպվող չէ, նրան թվում է, թե միևնույնն է, «նորին կայսերական մեծությանն» կարգերը նորից կհաստատվեն։

Հենց այդ զգացմունքն է, որ նրա մեջ ծավալ ստանալով, մեծանալով, նրան գցում է հիստերիկ վիճակի մեջ, հարկադրում է նրան գնալ և երկրպագել փողոցով անցնող ցարական զորքի ու գեներալների կառքի առջև, առանց ըմբռնելու, որ այդպիսի բան չէր կարող լինել Սովետական իշխանության ժամանակ և որ այդ՝ կինոնկարահանման համար պատրաստված շքերթ է...

Պատրանքի ու իրականության այդ ուժգին բախումն էլ կայծակի արագությամբ վերջ է տալիս հին չինովնիկի կյանքին ու նա էլ անշնչացած ընկնում է այդ կեղծ կառքերի, կեղծ գեներալների ոտների առջև։

Արագու ուշադրավ գործերից են «Ջրվեժի ցոլքումն» և «Լուսնի շողերով» վիպակները, որոնք վկայում են հեղինակի անժխտելի ստեղծագործական աճը և լայն կտավ ստեղծելու կարողությունը։

«Ջրվեժի ցոլքումն» վիպակում արտացոլված է երկրի սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարը։ Հեղինակն այնտեղ արծարծում է մի շատ կարևոր պրոբլեմ՝ սովետական մարդու հոգևորանության կազմավորումը, անցյալի մնացուկների վերացումը մարդկանց գիտակցության միջից, նոր՝ կոմունիստական բարձր ու վեհ բարոյականության շաղկապումը ստեղծագործական աշխատանքի հետ։

Այս շատ բարդ խնդիրը լուծված է բուրժուական կենցաղի, սովորությունների, բարոյականության ուժեղ ազդեցությամբ սոցիալիստական կարգերը եկած ինժեներ Թարյանի հոգևորանական անցումով, ամբողջովին նորին նվիրվելով, որը բաց է անում նրա առաջ գիտական և հասարակական գործունեության անսահման հեռանկարներ, դարձնում նրան սոցիալիզմի համար մղվող պայքարի առաջամարտիկներից մեկը։

Թարյանը հոգևորանորեն վերակառուցվելուց առաջ սովորական մի քաղքենի է, փառասեր, հարստանալու, ավելի փարթամ ապրելու տենչով տարված մի էգոիստ։ Հանրային օգուտը, պետական ու հասարակական պահանջը ստորադասվում են նրա անձնական շահին։

Իր մասնագիտական հմտության շնորհիվ ձեռք բերված հաջողությունները, նվաճումները, ոչ թե դարթեցնում են նրա մեջ սոցիալիստական հասարակությանը օգտակար դառնալու, սովետական քաղաքացու իր պարտքը կատարելու ազնիվ զգացում, այլ նրա առաջ ցցում են հետագա ավելի փարթամ կյանքի հեռանկարը, որը քաջալերվում, թևավորվում է նրա՝ նույն բուրժուական մեշչանական դաղափարներով տոգորված, կնոջ կողմից։

Կոլեկտիվից կտրված, նոր ու թարմ ուժերի, այդ թվում երիտասարդ, բայց տաղանդավոր ինժեներների, փորձառու վարպետների կարծիքը արհամարհող, նրանց հալածող Թարյանը մոլորվում է իր եսի ոլորտներում, ինքնահոսի է թողնում շինարարության աշխատանքը։ Նա չունի աշխատանքային կոնկրետ պլան, դանդաղաշարժ է, չի կարողանում ժամանակի հետ ընթանալ, ուշացնում է շինանյութի հայթայթումը, չի մտահոգված բանվորների կուլտուր-կենցաղային կարիքներով, թերություններ, որոնց

համար իրավացիորեն ծաղրվում է պատի թերթում և կանգնում փակուղու առաջ, իսկ նրա դեկավարած օրեկտում առաջանում է մեծ ճեղքվածք։

Ահա այս վիճակումն է Արարին ներկայացնում Թարյանին վիպակի սկզբում, երբ բանվորական ամբողջ կոլեկտիվը, ինժեներ-տեխնիկական անձնակազմը մեկ մարդու պես արտադրական խորհրդակցությունում դուրս են գալիս և քննադատում են Թարյանին, բոլշևիկյան անողոքությամբ հրապարակի վրա են դնում նրա սխալները, այդ սխալների աղետալի հետևանքները, ցույց են տալիս փակուղուց դուրս գալու ճանապարհները։

Թարյանը, սակայն, ունի մի առավելություն, որը հնարավորություն է տալիս նրան դուրս գալու կործանումից։ Նա դիտակցում է իր սխալները, շարունակ ինքն իրան հարց է տալիս. «Իսկ այս ամբողջի մեջ չկան արդյոք ձեր սեփական սխալները»։

Սեփական սխալների այդ գիտակցմանը նպաստում է Մոսկվայից «Կայծերը» ժուռնալի խմբագրության կողմից եկած Լիդան։ Կենսուրախ, վառվռուն, անկեղծ ու անմիջական այդ ռուս աղջկան խորթ են կեղծիքն ու անձնական շահի հետապնդումը, քծնանքն ու շողոքորթումը։ Լիդան աստիճանաբար հեղաշրջում է Թարյանին, նրա մեջ կառուցում, ստեղծում է նոր մարդուն, սոցիալիստական գիտակցության եկած, սովետական ինտելիգենտին։

Լիդան տեխնիկական այդ հին ինտելիգենցիայի ներկայացուցչին չի վերափոխում ոչ հրաշքով, ոչ իր թովչանքով, և ոչ էլ առհասարակ միայն իր անհատական արժանիքներով։ Լիդայի մեջ խտացված են մի կողմից սովետական մարդուն հատուկ վեհ գծերը՝ հայրենասիրությունը, անձնազոհությունը, նվիրվածությունը, եռանդը, մյուս կողմից նա ամենից առաջ կոլեկտիվի անբաժանելի մասն է, Թարյանից առաջ ինքն է այդ կոլեկտիվում թրծվում, կոփվում, մերվում։

Լիդան վերացականորեն ոգևորվող, կյանքից կտրված մի աղջիկ չէ, նա ակտիվ կազմակերպիչ է, շինարարական աշխատանքի եռանդուն մասնակից։ Նրա հաստատ համոզումով սոցիալիստական շինարարությունը պահանջ ունի հերոսների, իսկ հերոսը պետք է հանդես դա աշխատանքում, պայքարում։ Դա՝ մոռանալով իր անձնական հակումները, նույնիսկ սերը, պետք է տարվի ընդհանուր գործով, ընդհանուրի օգուտի մեջ որոնի իր երջանկությունը։

Թարյանի գիտակցության միջից բուրժուական մտածողության հետքերի վերացումը կատարվում է դժվար, ծանր աշխատանքով։ Ինչպես որ մի ամբողջ կոլեկտիվ աշխատում է Թարյանի դեկավարած օրեկտը կառուցելու համար, այդպես էլ ամբողջ կոլեկտիվը աշխատում է նրա գիտակցության միջից հնի մնացուկները լիկվիդացնելու համար։

Ամենից առաջ այդ ուղղությամբ աշխատում է Գետաշենի կոլեկտիվը, որի վճռական խոսքը արտահայտվում է արտադրական խորհրդակցությունում։ Այս ուղղությամբ տևական աշխատանք է կատարում պարտիական դեկավարությունը և վերջապես Լիդան՝ Թարյանի հողերանության վերափոխման այդ հմուտ ինժենները։

Վերափոխված Թարյանը անձնուրաց աշխատանքի մեջ է տեսնում ճշմարիտ ձգտումը, սերն ու հոգևոր երջանկությունը, ու այդ աշխատանքի մեջ՝ քլունգը ձեռքին ավելի դեղեցիկ ու բարձր է թվում նրան Լիդան։

Աբաղու «Զրվեժի ցոլքումն» վիպակը ունի որոշ թերություններ։ Այդ թերություններից է, ամենից առաջ ինժեներ Թարյանի հապճեպ որոշումը կնոջից բաժանվելու մասին։ Հեղինակը նույնիսկ մոռանում է հիշատակել, թե նա այդպիսի մի ճակատագրական քայլ կատարելուց առաջ մտածել է արդյոք իր երեխաների մասին։ Վիպակի սկզբում Թարյանը հանդես է գալիս երեխաների տեր մի հայր, նա կազմել է իր ընտանիքը, սիրում է երեխաներին և հանկարծ ամբողջովին թողնում է իր ընտանիքը, երեխաներին, առանց հոգեկան որևէ ապրումի, զղվարության։ Վիպակում թույլ է գծված Թարյանի կնոջ քաղքենիական կերպարը։ Այն արարքներով և գործողությամբ, որով հանդես է գալիս Թարյանի կինը, գեղեցիկ չէ։ Իրավունք տալիս ամուսնուն, լքելու իրեն ու երեխաներին։

Այս բոլորով հանդերձ, վիպակի որոշ կերպարները, հատկապես Լիդան, ինժեներ Թարյանը, գծված են վարպետությամբ և անտարակույս սովետահայ արձակի ստեղծած լավագույն կերպարների շարքում կարող են դասվել։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը արտացոլող սովետահայ գրականության մեջ իր արժանի տեղն ունի Աբաղու «Լուսնի շողերով» պատմվածքը, որի մեջ հեղինակը արծարծել է կոլխոզ շինարարությունը, գյուղատնտեսության մեքենայացումը, կուլակության լիկվիդացիան. այլ խոսքով, այն հիմնական խնդիրները, որոնց լուծումով պայմանավորված էր սովետական սեկտորի հաղթանակը գյուղում։

Այս պատասխանատու գերը, որպես կատարողներ հանդես են գալիս ամենից առաջ սովետական հայրենասեր, կենսախինդ ու նվիրված երիտասարդ գիտնականները, գյուղում պրակտիկայի եկած գյուղատնտեսներ Դուրգենն ու Հասմիկը, որոնց մեծապես օժանդակում է հին ռևոլուցիոներների սերնդի ներկայացուցիչ Միքայելը։

Միքայելի, Դուրգենի և Հասմիկի փոխհարաբերությունը հին և նոր սերնդի սովորական փոխհարաբերություն, համագործակցություն չէ։ Միքայելը տարբերվում է ինժեներ Թարյանից, այլապես Դուրգենն ու Հասմիկն էլ տարկարդված կլինեին նույնպիսի ծանր ու հարատև աշխատանք կատարել, ինչպես Լիդան։

Սովխոզի գիրեկտոր Միքայելն ըստ էության հին մարդ չէ։ Նա անցյալում եղել է նվիրված ռևոլուցիոներ, կռվել է բանվորական շարժումների մեջ, պայքարել է հանուն կալվածատիրական Ռուսաստանի տապալման, հանուն բանվորա-գյուղացիական իշխանության հաղթանակի ու այժմ Սովետական իշխանության գոյության մեջ տեսնում է իր գաղափարների հաղթանակը, իր երազների իրագործումը, դրա համար ամենևին հետ չի մնում երիտասարդ էնտուզիաստներից, իր փորձառությամբ, հմտությամբ, հեղինակությամբ օժանդակում է նրանց շատ և շատ հարցերում։

Նոր կյանքը երիտասարդացրել է Միքայելին, նրան ներշնչել արիություն և կորով։ Նրա հատատաս համոզումով անհնար է սոցիալիստական իշխանություն առաջ տանել, սոցիալիզմը կառուցել, առանց անձնվիրության ու հերոսական աշխատանքի։ Միքայելի ամբողջ ձգտումն է մեքենայացնել սովխոզի աշխատանքը, ժամանակակից գիտության վերջին խոսքով զինել այն ու միաժամանակ նպաստել կոլեկտիվացման տարածմանը, գյուղի լուսավորության աշխատանքներին։

Արագին կարողացել է վարպետ գրչով տալ կուլակների որոշակի ազդեցության տակ գտնվող գյուղի կոլեկտիվացումը Միքայելի և երկու երիտասարդ էնտուզիաստների ջանքերով։ Կենդանի է նկարագրված հատկապես կոլեկտիվացմանը նվիրված ժողովը։ Հանդես են գալիս կուլակների դրդումով ժողովին մասնակցող մարդիկ, իրենց էգոիստական, սեփականատիրական պահանջներով, որոնց հիմքում ընկած է խոր ատելությունը Սովետական իշխանության նկատմամբ։ Հանդես են գալիս գյուղական չքավորները, այն մարդիկ, որոնց ուսերի վրա է կանգնած նոր հասարակարգը, որոնց շահերի պաշտպանն է Սովետական իշխանությունը։

Նրանցից մեկը ասում է.

«Էհոսեղ մեզ ասում են, թե կոլխոզ հարկավոր չէ, բայց ովքեր են ասողները. ենթակուլակները, կուլակի մարդիկ։ Կուլակների համար, ինչ ասել կուզի, տի հարկավոր ոչ կոլխոզ, ոչ էլ Սովետական իշխանություն. դրանց համար միայն հարկավոր է, որ ամեն բան մնա իր առաջվա տեղը, որ իրանք տեր ըլեն, մենք նոքար. բայց էդ հին ժամանակն անցավ։ Ձեզ համար կոլխոզը մահ է, գնացեք ձեր գլխներին վայ տվեք, իսկ մենք, չքավորներս ու բատրակներս ուզում ենք, որ կոլխոզ լինի և մեր ուզածն էլ կանենք»։

Արագին «Լուսնի շողերով» վիպակում փորձել է առաջ քաշել սովետական դրական հերոսի կերպարը, այդ հերոսի միջոցով լուծել անհատի ու հասարակության փոխհարաբերությունը, ցույց տալ անհատի վերափոխող շինարար դերը հասարակական կյանքում, աշխատանքում, ստեղծագործական կոլեկտիվի մեջ։

Արագին միաժամանակ ներկայի հիման վրա փորձել է տեսնել այն նորը, որը դեռ տիպական չէ այժմ, այս էտապում, ապա անպատճառ տիպական կլինի ապագայում, որովհետև կան դրա համար բոլոր նախադրյալները և այդ խարսխված է սոցիալիստական ինդուստրիայի ու տեխնիկայի վրա։

Այդպիսի միանգամայն ռեալ կանխատեսում է սոցիալիստական ռոմանտիզմի ոգեշունչով այս վիպակում Արագու պատկերացրած ապագա կոմունիստական հասարակարգը։

Գյուղի հաջող կոլեկտիվացումից հետո, երիտասարդ էնտուզիաստները, որոնց մեջ միաձուլվել է հայրենիքի սերն ու փոխադարձ մտերմական կապը, առանձնացած մի բլուրի վրա, երևակայությամբ պատկերացնում են ապագա կոմունիստական հասարակարգը, երբ իսպառ վերացել է սեփականատիրական հասարակարգի ամենավերջին մնացուկներն անդամ և մարդիկ ապրում են կատարյալ գիտակցական աշխատանքի շնորհիվ ձեռք բերված ամենաերջանիկ ու պայծառ կյանքով։ Մարդը այդ հասարակարգում ապրում է իր մտավոր կատարյալ ծաղկումը։ Ամբողջ տիեզերքը այնտեղ ստորադասված է մարդ արարածին։ Նրա կամքը, ստեղծագործական աշխատանքն է վերափոխել այդ բոլորը, հպատակեցրել իրեն։

Արագու պատկերացրած այդ ապագա կոմունիստական հասարակարգը հեռու է ուտոպիական որևէ հատկանիշից, այն ռեալ է, կոնկրետ, որոշակի և պատճառաբանված է լիովին հենց նոր, մեր սովետական առաջավոր տեխնիկայի ու գիտության ընձեռած հնարավորություններով։

«Այրվող հորիզոն» վեպը Արաղու ամենածավալուն և ընդարձակ գործն է ու որոշ չափով կրում է ինքնակենսագրական բնույթ։ Այդ վեպը հայ գրականության մեջ առաջինը արտացոլում է 1900-ական թվականներին Պետերբուրգում ծավալված ուսանողական ռևոլյուցիոն շարժումները և այդ շարժումներին հայ ուսանողության մասնակցությունը։

Որպես ժամանակակից և մասնակից այդ շարժումներին, հեղինակը ջերմ ու կենդանի պատկերներով նկարագրել է ուսանողական կյանքը Պետերբուրգում, համալսարանական ու արտահամալսարանական առօրյան։

Համալսարանական կյանքը միապաղաղ է, ձանձրալի, ավանդվում են բացառապես պաշտոնական չոր ու ցամաք դիտություններ, ամենազգույշ վերապահումներով։

Համալսարանի պատերից ներս և դրսում, ամենուրեք, շրջում է սև կառեսի ուրվականը, վիտում են լրտեսները։

Քաղաքական այս ծանր, խստապույն ու հեղձուցիչ մթնոլորտը ջլատում է մարդկանց ուժն ու եռանդը։

Նույն Պետերբուրգում, առկա է սակայն մի այլ աշխարհ, որը էապես տարբեր է պետական պաշտոնական հսկողության ցանցի մեջ գտնվող կյանքից։ Այդ՝ բանվորական և ուսանողական պայքարի աշխարհն է, ազատության ձգտող, ազատության համար մաքառող մարդկանց աշխարհը, որը, չնայած դժվարին պայմաններին՝ ներքին դավաճանների առկայությանը, օրեց օր ընդարձակվում է, մեծանում, իր ալորտի մեջ առնում նորանոր մարդկանց, անձնուրաց երիտասարդների և դառնում է ցարիզմին սարսափ պատճառող անեղացունց մի ուժ, մի երկաթյա բռունցք՝ ուղղված բռնապետության դեմ։

Հակառակ ցարական պաշտոնական օրենքի սահմանած խստություններին, այդ աշխարհում տիրում է ազատասիրությունը, ջերմ ընկերասիրությունը, անձնազոհությունը։ Այնտեղ բոլոր ժողովուրդների պատկանող անհատները հավասար են, եղբայրացել են, հանդես են գալիս նույն սկզբունքների պաշտպանությամբ, պայքարում են նույն ընդհանուր թշնամու դեմ։

Այս երկրորդ աշխարհը բաց է անում մարդու հոգու գաղտնարանները, նրան եռանդ ու հավատք է ներշնչում ապագայի համար, նրան տալիս է ապրելու ու պայքարելու անսահման մեծ լիցք։

Եվ այս բոլոր առաջադեմ գաղափարները գալիս են մարքսիստական լենինյան գրականությունից։ «Կոմունիստական մանիֆեստը», Վլադիմիր Իլյիչ Լենինի աշխատությունները, լենինյան «Իսկրա»-յի համարները կարողացել են ռուս, վրացի, հայ և այլ ազգությունների բազմաթիվ մատղկանց ոտքի հանել ընդդեմ ցարական բռնակալության։

Այս վեհ ու սրբազան պայքարի ֆոնի վրա է, որ Արաղին կերտել է իր ռևոլյուցիոն հերոսների պայծառ կերպարները։ Ռուս ռևոլյուցիոն ուսանողներ Վերան, Պետրովը, ռևոլյուցիոն բանվորներ Սակալովը, Շիրովը, հայ ուսանողներ Դարունյանը, Լեոնյանը, Այմազովը և ուրիշները գծված են վառ, կենդանի գույներով իրենց հարազատ միջավայրի մեջ։ Նրանք՝ ընդհանուր գործի մեջ հանդես բերելով իրենց անձնուրաց մասնակցությունը, մեծով հանդերձ ռևոլյուցիայի զինվորագրված մարտիկներ, ունեն

իրենց անհատական որոշակի հակումներն ու բնավորության շեշտված գծերը, որոնք ավելի են ամրոզջացնում նրանց կերպարները։

Վերան՝ գրաղարանում մարքսիստական գրքերից իր ուսուցիչներ եղբոր համար ցիտատներ արտագրող, աշխատանքի ընթացքում աստիճանաբար ուսուցչային նվիրված այդ ուսս հայրենասեր աղջիկը, ուսս գաղափարական ու տակուն կնոջ կատարյալ տիպարն է, որի անձնական ևսը, նախասիրությունները, սերը, ձգտումները ձուլված, միացած են ընդհանուր գործի, ուսուցչության հետ։

Վեպի գլխավոր հերոս Լևոնյանը հենց սկզբից պատրաստի մարքսիստ, ուսուցիչներ չէ։ Սկզբում տարված է Հերակլիտի փիլիսոփայությամբ։ Այդ շրջանում նա զժգոհ է ցարական իրավակարգից, քաղաքական ծանր պայմաններից, բայց չգիտի ելքը, ճանապարհը։ Այդ ճանապարհն է, որ նրան ցույց են տալիս ուսս ուսուցիչներները։ Հանձին Վերայի, նա տեսնում է ուսուցչային անսահմանորեն նվիրված մարդկանցից մեկի տիպարը, հետևից գաղափար է կազմում Վերայի ուսուցիչներ եղբոր մասին։

Վերայի հետ նրա ծանոթանալը, մտերմությունը, փորձված ուսուցիչ ուսանողներ Պետրովի, Դարուենյանի հետ հաղորդակցելը, Մարքսի «Կապիտալ»-ի, Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության և լենինյան «Իսկրա»-յի ընթերցումը, այս բոլորը անվերապահորեն նրան կապում են ուսուցչի շարժման հետ, նա նետվում է ցարիզմի դեմ մղվող ընդհատակյա պայքարի մեջ, լինում է ուսանողական ցույցերի առաջին շարքերում, ձերբակալվում է, բանտարկվում, աքսորվում, աքսորվում դեպի Սիբիր։

Լևոնյանի անցած այս ճանապարհը մարտական մկրտությունից մինչև Սիբիր աքսորվելը ամրոզջացնում են ուսուցչի մարտիկի կերպարը։

Լևոնյանը հոխորտացող, մեծամիտ չէ, նա ծանրախոհ է, կշռադատող, բայց միաժամանակ անհերկյուղ։ Հաղթանակի հավատը նրան հեռու չի պահում որևէ սխրագործությունից, ինչքան էլ այդ լինի վտանգավոր։

«Այրվող հորիզոնը» վեպի ամենաուշագրավ դեմքերից մեկն է «հավիտենական ուսանող» Ալմազովը, Կովկասցի այդ կենսուրախ, ճարպիկ, անվախ ու զվարճասեր երիտասարդը։

Բնավորության շատ գծերով Ալմազովը տարբերվում է Լևոնյանից։ Հակառակ վերջինիս լրջության, զգուշության, ծանրախոհության, Ալմազովը կատակասեր է, հաճոյախոս, մասամբ արկածների սիրահար, երկրից երկիր թափառող, սիրում է լինել խնճույքներում։

Չնայած այս տարբեր գծերին, Ալմազովին և Լևոնյանին միացնում է նույն գաղափարը՝ ուսուցչին պայքարը ցարիզմի դեմ։ Այս հարցում Ալմազովը ոչ միայն հետ չի մնում իր ընկերներից, այլ շատ կողմերով աչքի է ընկնում։ Նրա բնավորության գծերը՝ անվախությունը, ճարպկությունը, համարձակությունը, խիզախությունը արտահայտվում են ուսուցչին առաջադրանքների կատարմանը։ Նա նետվում է ամենավտանգավոր օպերացիաների մեջ։ Հեկտոգրաֆ մեքենայով նրա գիշերային մարշրուտը,—ճանապարհներին ոստիկանությունից խույս տալու հմուտ մանևրները, այդ ոստիկաններից մեկին ուշագնաց գետին գլորելը և հեկտոգրաֆը ապահով

տեղ հասցնելը ամբողջացնում են Ալմազովի ռևոլուցիոն կերպարը և միաժամանակ հանդիսանում են վեպի ամենահաջողված ու լավագույն էջերը։

Վեպում նկարագրված մի շարք հատվածներ—ուսանողական ցույցը, Վերայի հետ սահնակով գնալի կղզին դիշերային ճանապարհորդությունը, Վերայի հրաժեշտի բոպեները, Լևոնյանի ձերբակալությունը և այլն, գրված են ջերմ շնչով և իսկապես տպավորիչ են։

Հատկապես ցնցող է, հուզիչ, վեպի վերջում նկարագրված տեսարանը։ Դեպի Սիբիր աքսորվող ուսանողները և բանվորները վագոնի պատուհաններից տեսնում են բոցավառվող, այրվող հորիզոնը, իմանում են, որ ապստամբ գյուղացիները այրում են կալվածատերերի ապարանքները։ Ուսանողներից մեկը ասում է.

—Կալվածատիրոջ գղյակը այրվում է։

Մյուսը պատասխանում է.

—Ո՛չ, այրվում է հին Ռուսաստանը։

Հատկանշական են ռուս ռևոլուցիոներ Պետրովի խոսքերը.

«Որքան էլ տարերային լինի այս շարժումը, բայց մեր մեծ առաջնորդը, Լենինը, կտանի այն իսկական ուղիով... Կգա փոթորիկը, կրոնկի ամբողջ աշխարհը ու մենք էլ կվերադառնանք նորից»։

* * *

Հայրենական պատերազմի տարիներին Արազու գրած պատմվածքների ու ակնարկների մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի «Հայրենի հողը», որը սովետահայ արձակում առաջինն էր արձագանքում Հայրենական պատերազմին և սկիզբ էր դնում պատերազմական շրջանի իսկապես հայրենասիրական, մարտական արձակին։

Դրական ճակատից անարգ թշնամու դեմ ուղղված այդ առաջին կրակոցը դիպուկ էր, նպատակասլաց, տոգորված ստալինյան դարաշրջանի մարդու անկեղծությամբ ու վճռականությամբ։

Պատերազմն ակսվելուց ընդամենը մեկ շաբաթ հետո գրված այդ դեղեցիկ էջում, Արազին, հայրենիքի նկատմամբ անսահման սերը մարմնավորել է մի պզտունց հայրենի հողի մեջ, որը իր հետ ռազմաճակատ է տարել մարտիկը և երդվել է արյան գնով պաշտպանել այն։

Արազու հերոսը մի պզտունց հողի մեջ չի տեսնում միայն իր ծննդավայրը՝ գյուղը կամ առհասարակ Սովետական Հայաստանի տերիտորիան, այլ անծայրածիր ողջ սովետական երկիրը, որի ամեն մի պզտունց հողը պաշտպանելու է դուրս եկել հայ մարտիկը։

«Գնացինք հանի,—գրում է մարտիկը իր մորը,—անցանք շատ երկրներ՝ մեկը մյուսից գեղեցիկ, տեսանք շատ ժողովուրդներ... դրանք մեր մեծ Միության ժողովուրդներն են, որ ապրում են եղբայրական սիրով։ Այս Միության մեջ ենք և մենք, սա այն երկիրն է, որտեղ առաջին անգամ բացվել է մարդկային երջանկության՝ կոմունիզմի լույսը... Անուշ է հանի, հայրենի հողը... և քո տված մի պզտունց հողն էլ այս մեծ երկրից է...»։

Արազու այս շրջանի մյուս պատմվածքների գաղափարական բովան-

դակությունը խարսխված է ամեն ինչ ռազմաճակատի համար, «հանուն հայրենիքի, հանուն հաղթանակի» ստալինյան կոչերի վրա։

Այդ նույն հայրենասիրական դաղափարներն են ոգևորում ու աշխատանքային սխրագործության մղում գյուղում Աշխենին, քաղաքում Վերդինեին (համանուն պատմվածքներում), որոնք՝ փոխարինելով ռազմաճակատ մեկնած իրենց ամուսիններին, թիկունքում կատարած իրենց անձնազոհ աշխատանքով մրցում են ռազմաճակատում ֆաշիզմի դեմ մաքառող ամուսինների հետ։

Ռազմաճակատին ծառայելու, անարդ թշնամու պարտություն արագացնելու ազնիվ ու հայրենասիրական ձգտումով է, որ Արադու հերոսներից պրոֆեսոր Մելյանը («Պրոֆեսորը») ոչ միայն իր ամբողջ գիտական գործունեությունն է շուռ տալիս դեպի ռազմաճակատի կարիքները, անում է ռազմական նշանակություն ունեցող մի գյուտ, այլև անձամբ ցանկանում է լինել ռազմաճակատում, տեսնել իր գյուտի օգուտները։

Արադու «Ամնուիքը», «Հրամանը», «Ալիքը» և «Ասելությունը» նովելները պատկերում են գերմանական ֆաշիզմի դեմ մղվող պայքարում պարտիզանական ջոկատների կատարած հայրենասեր սխրագործությունները։ Դրանց մեջ հանդես է եկել Արադու ջերմ սերը դեպի սոցիալիստական հայրենիքը, կիզող ատելությունը դեպի գերմանական ֆաշիզմը և անսասման հավատքը պատերազմի հաղթական վախճանի, գերմանա-ֆաշիստական դավթիչների ոչնչացման մասին։